ՍԱՂՄՈՍ 94

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աղերս ՏԻՐՈՋԸ Իր ժողովրդի համար վրեժխնդիր լինելու	Աստված արդարի ապաստարանը	Չարագործներից ազատվելու աղոթք	Աստված բոլորի Դատավորը	Արդարության Աստվածը
<u>MT ներածություն չկա</u>				
94:1-7	94:1-3	94:1-3	94:1-4	94:1-2
				94:3-4
	94:4-7	94:4-7		
			94:5-7	94:5-6
				94:7-8
94:8-11	94:8-11	94:8-11	94:8-11	
				94:9-11
94:12-16	94:12-15	94:12-15	94:12-15	94:12-13
				94:14-15
	94:16-19	94:16-23	94:16-19	94:16-17
94:17-23				
				94:18-19
	94:20-23		94:20-23	94:20-21
				94:22-23

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ուշադրություն դարձրե՛ք NASB-ում առկա ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆՆԵՐԸ՝
1. Ո՛վ ՏԵՐ (ՅԱՀՎԵ), Սաղմ. 94:1,3,5,18
2. Վրեժխնդրության (BDB 608) Աստված (*Էլ*), Սաղմ. 94:1 (երկու անգամ)
3. Ո՛վ ՏԵՐ (*Yah*, ՅԱՀՎԵ բառի համար հապավումը), Սաղմ. 94:12 (տես՝ 94:7)

Բ. Ուշադրություն դարձրե՛ք ՅԱՀՎԵԻՆ նկարագրող կերպերը ըստ անունների, տիտղոսների, արտահայտությունների՝
1. վրեժխնդրության Աստված, Սաղմ. 94:1
2. երկրի Դատավորը, Սաղմ. 94:2
3. Հակոբի Աստվածը, Սաղմ. 94:7
4. ՏԵՐԸ, իմ պաշտպանությունը, Սաղմ. 94:22
5. Աստված իմ Վեմը, Սաղմ. 94:22
6. ՏԵՐԸ մեր *Էլոհիմը*, Սաղմ. 94:23

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>, Ա.Գ.Դ.

Գ. Այս Սաղմոսը աղաղակում է ուխտի Աստծո արդարության համար, որ իրեն այս աշխարհում դրսևորի (այսինքն՝ Հոբ, Սաղմոս 73): Չարն ու ամբարշտությունը ներկա պահին գերակշռում են, սակայն հենց Նրա իսկ ժամանակի մեջ: Աստված վրեժխնդիր է լինելու (այսինքն՝ դատն է վարելու) արդարի համար: Այս Սաղմոսն ինձ հիշեցնում է Մատթ. 13:24-30-ում Հիսուսի առակը: Ժամանակին՝ ճիշտ ժամանակին, Աստված գործելու է այնպես, որ օրհնելու է և ընդունելու արդարին, սակայն դատելու է և մերժելու կեղծ հետևորդներին: Թե՛ ՀԿ-ում և թե՛ ՆԿ-ում ոչ բոլոր ակնհայտ հետևորդներն են հավատարիմ հետևորդներ: Կան նաև կեղծ հետևորդներ (տես՝ Մատթ. 7:15-27):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ (*APHISTEMI*)</u>

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 94:1-7
[1]Ո՛վ ՏԵՐ Աստված, Ում պատկանում է վրեժխնդրությունը,
Ո՛վ Աստված, Ում պատկանում է վրեժխնդրությունը, Քեզ հայտնի՛ր:
[2]Ելի՛ր, ո՛վ երկրի Դատավոր, հատուցում տո՛ւր ամբարտավաններին:
[3]ՏԵ՛Ր, մինչև ե՞րբ են ամբարիշտները,
Մինչև ե՞րբ են ամբարիշտները հաղթանակելու,
[4]Մինչև ե՞րբ են բարբառելու ու ծանր խոսքեր ասելու,
Ու պարծենալու են բոլոր անօրենություն գործողները:
[5]Նրանք ոտնակոխ են անում Քո ժողովրդին
Ու ճնշում են Քո ժառանգությունը,
[6]Մորթում են որբևայրուն ու պանդուխտին,
Սպանում են որբերին:
[7]Եվ դեռ ասում են. «ՏԵՐԸ չի տեսնում,
Եվ Հակոբի Աստվածը չի լսում»:

94:1-7 Այս պարբերություն արտահայտում է հավատարիմ հետևորդի հիասթափությունը, երբ տեսնում է այն մարդկանց անաստվածությունը, որոնք հայտարարում են, թե ճանաչում են Աստծուն (այսինքն՝ ուխտի մեջ գտնվող այլ համախոհներ, ըստ երևույթին հարուստ և հեղինակություն

ունեցող): Նրանք ապրում և գործում են այնպես, կարծես թե արդարության Աստված գոյություն չունի (այսինքն՝ գործնական աթեիստները):

Ուշադրություն դարձրե՛ք՝

1. նրանք հպարտ են, Սաղմ. 94:2բ
2. նրանք ցնծում են, Սաղմ. 94:3բ
3. նրանք ամբարտավանությամբ են խոսում (բառացի՝ «դուրս են թափում», տես՝ Սաղմ. 59:7, Առակ. 15:2), Սաղմ. 94:4ա (տես՝ Սաղմ. 31:18, 75:5):
4. նրանք պարծենում են իրենցով, Սաղմ. 94:4բ, տես՝ 10:3, 52:1
5. նրանք ոտնակոխ են անում հավատարիմ հետևորդներին, Սաղմ. 94:5ա (այսինքն՝ Հոբ 5:4, 22:9, Սաղմ. 10:18, 72:4, 74:21, Առակ. 22:22, Եսայի 3:15-ում տեղի ունեցած կաշառված դատերը):
6. նրանք ճնշում են Աստծո ժառանգությունը, Սաղմ. 94:5բ, տես՝ 94:14
7. նրանք սպանում են (հնարավոր է բառացի է կամ էլ փոխաբերորեն՝ օրինական իրավունքները կորցնելու մասին)
   ա. որբևայրին
   բ. օտարականը՝ պանդուխտը
   գ. որբը (տես՝ Ելից 22:21-24, 2 Օրինաց 10:18, 14:29, 26:12-15)
8. նրանք պնդում են, որ Աստված չի տեսնում կամ Նրան չի անհանգստացնում իրենց արարքները, Սաղմ. 94:7 (տես՝ Սաղմ. 10:11, 59:7, 64:5, 73:11, Հոբ 22:13, Եսայի 29:15, 47:10, Եզեկ. 8:12, Մաղ. 2:17):

94:1-2 Առկա են աղոթքի երեք խնդրանքներ (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), որոնք աղաչում են Աստծուն գործելու համար՝

1. Քեզ հայտնի՛ր – BDB 422, KB 424, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 80:1,3,7. այն կիրառվում է «Մովսեսի օրհնության մեջ»՝ 2 Օր. 33:2-ում:
2. ելի՛ր – BDB 669, KB 724, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ. տես՝ Սաղմ. 3:7 և 7:6 գրառումները
3. հատուցում տո՛ւր (բառացի՝ «հետ բերել») – BDB 996, KB 1427, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 2 Օրինաց 32:41,43, Եսայի 66:15

94:1 «վրեժխնդրություն» Այս ԻԳԱԿԱՆ տերմինը (BDB 668) ՀՈԳՆԱԿԻ է: NASB լուսանցքում թարգմանում է այն որպես «վրեժի գործեր»: ԱՐԱԿԱՆ ձևը ի հայտ է գալիս 2 Օրինաց 32:35, 41-ում: Վրեժխնդրությունն այն է, ինչ ՅԱՀՎԵՆ հատուցում է, երբ Իր ուխտն է խախտվում:

1. երբեմն այն կապ ունի Իր սեփական ժողովրդի հետ (տես՝ Հատկապես Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-32, Երեմ. 5:9, 29, 9:9, Միքիա 5:14):
2. Երբեմն հեթանոս ազգերին (տես՝ Սաղմ. 79:10, 149:7, Եսայի 59:18, 63:4, Նաում 1:3)

JPSOA տարբերակը տալիս է «հատուցում»: Հրեական Սերտողության Աստվածաշունչը՝ էջ 1388, բնութագրում է սա որպես «արդար հատուցում»: Ուխտի անհնազանդությունն ունի հետևանքներ (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30):

94:2 «երկիրը» Եբրայերեն տերմինը (BDB 75, KB 90) ունի լայն իմաստային դաշտ (տես՝ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 518-526): Միայն համատեքստը կարող է որոշել դրա նշանակությունը (տես՝ <u>ՀԱՑՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ</u>): Այստեղ հնարավոր է նկատի ունի՝

1. ամբողջ մոլորակը (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ է ամբողջ երկրագնդի Դատավորը, տես՝ Ծննդ. 18:25):
2. Ավետյաց Երկիրը. ՅԱՀՎԵՆ Ուխտի Աստվածն է

Որ տարբերակը կապ ունի, թե ովքեր են Սաղմ. 94:3-ի «ամբարիշտները»՝

1. ոչ իսրայելացիները
2. իսրայելացիները

Կարծում եմ #2 տարբերակը լավագույնս է համապատասխանում այս Սաղմոսին, քանի որ նրանք մեղադրվում էին Մովսեսի պատվիրանները խախտելու մեջ (տես՝ Սաղմ. 94:6) և ապա կոչվում են

«ժողովրդի մեջ եղող անզգամներ» (տես՝ 94:8ա): ՅԱՀՎԵՆ արդար Դատավոր է (տես՝ Ծննդ. 18:25, Դատ. 11:27, Սաղմ. 7:11, 50:6, 75:7, Եսայի 33:22):

94:3 «Մինչև ե՞րբ...» Այս դարձվածքը հարցադրելու կերպ է՝

1. ինչու Աստված արդարությամբ չի գործել՝ Սաղմ. 6:3, 74:10, Ամբ. 1:2, Զաք. 1:12
2. կների արդյո՞ք Աստված Իր ժողովրդին՝ Սաղմ. 13:1, 79:5, 80:4, 90:13, Եսայի 6:11
3. ինչու են ամբարիշտները շարունակում իրենց գործողությունները՝ Ելից 10:3, 1 Թագ. 1:14, 3 Թագ. 18:21, Սաղմ. 82:2, Երեմ. 4:14, 12:4, Ովսեա 8:5, Ամբ. 2:6

Մարդիկ չեն հասկանում Աստծո խորհուրդները, ժամանակը, նպատակները (տես՝ Եսայի 55:9-11): Այս դարձվածքն արտահայտում է գիտության նմանօրինակ պակասը՝ համաձայն հարցադրման ձևաչափից:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 94:8-11
[8]Հասկացե՛ք, դո՛ւք, ժողովրդի մեջ եղող անզգամներ,
Եվ դո՛ւք՝ անմիտներ, ե՞րբ պիտի իմաստուն դառնաք:
[9]Մի՞թե Նա, ով ականջը դրել է, Ինքը չի լսում
Կամ թե՝ աչքը ստեղծել է, ու Ինքը չի տեսնի:
[10]Մի՞թե հեթանոսներին խրատողը չի շտկի.
Մի՞թե մարդուն գիտություն սովորեցնող Ինքը չի իմանա:
[11]ՏԵՐԸ գիտի մարդկանց մտքերը, որ դրանք ունայնություն են:

94:8-11 Այս պարբերությունը ցույց է տալիս, թե ինչպես են անզգամները մտածում, որ Աստված չգիտի (Սաղմ. 94:7):

1. Սաղմ. 94:9 հաստատում է, որ Աստված է մարդու մարմնի արարիչը (այսինքն՝ ականջի, աչքերի. մի՞թե Նա չի լսում և չի տեսնում):
2. Սաղմ. 94:10 հաստատում է, որ Աստված հայտնում է ճշմարտությունը՝
   ա. ազգերին (Սաղմ. 94:10ա)
   բ. բոլոր մարդկանց (Սաղմ. 94:10բ)

Համաձայն եզրակացության, ՅԱՀՎԵՆ գիտի ընկած, տկար, անցողիկ մարդկանց խորհուրդները, շարժառիթները և գործողությունները (տես՝ Սաղմ. 94:11, 11:4, 33:13-14, 66:7, Հոբ 11:11, 31:4, 34:21-23, Երեմ. 16:17, 32:19, Ովսեա 7:2, Եբր. 4:13):

1. Հավատարիմ հետևորդները մեր արարչի առջև բաց գիրք են:
2. Անհավատարիմ հետևորդների մտքերը (Սաղմ. 94:15) ունայնություն են (BDB 210 I, տես՝ Սաղմ. 94:4-7,8):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ</u>

94:8 «դուք անզգամներդ» Սա *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է (BDB 129, KB 146, տես՝ Սաղմ. 92:6), որը բխում է նախրի կամ գազանի համար կիրառվող արմատից (BDB 129): ԳՈՅԱԿԱՆԸ կիրառվում է Սաղմ. 73:22-ում որպես գազանին զուգահեռ բառ: Մատնանշում է ինչ-որ մեկի, որը վարվում է կենդանու պես՝ առանց բարոյական զսպվածության: Այն հաճախ մատնանշում է կռապաշտներին (այսինքն՝ Երեմ. 10:8):

94:10 «խրատել» Այս ԲԱՅԸ (BDB 406, KB 410, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) դատական տերմին է: Այս ամբողջ Սաղմոսը անդրադառնում է այն դատավորներին, ովքեր պետք է արտացոլեին ՅԱՀՎԵԻՆ, սակայն ցավոք արտացոլում էին ընկած՝ մեղավոր աշխարհը:

«Պատժել» (BDB 415) և «հանդիմանել» (BDB 406) բառերի միջև առկա է հնչերանգային խաղ, որը հաճախ է հանդիպում (տես՝ Սաղմ. 6:1, 38:1, Առակ. 9:7, Երեմ. 2:19), իսկ մարդիկ պատասխանատվություն են կրում Նրա հայտնությունների համար:

94:11 Պողոսը մեջբերում է այս համարը 1 Կորնթ.3:20-ում LXX-ից՝ Կորնթոսի եկեղեցում «իմաստունների» մասին իր քննարկման մեջ: Մարդկային իմաստությունը ունայն ու փուչ է (տես՝ Ժող.1:2,14, 2:11,23, 12:8):

ՅԱՀՎԵՆ Իրեն երկու կերպ է հայտնում՝

1. բնական հայտնություն (այսինքն՝ Նրա արարածի միջոցով)՝ Սաղմ.19:1-6, Հռոմ.1:19-20
2. հատուկ հայտնություն (այսինքն՝ Իր մասին Իր անձնական հայտնության միջոցով՝ Սուրբ Գրքով)՝ Սաղմ.19:7-11, Սաղմոս 119:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 94:12-16

12Երանի՛ այն մարդուն, ում Դու խրատում ես,
Ո՛վ ՏԵՐ, և Քո օրենքն ես սովորեցնում նրան:
13Որպեսզի ձախորդության օրերից նրան հանգիստ տաս,
Մինչև ամբարշտի համար փոս փորվի:
14Քանի որ ՏԵՐՆ Իր ժողովրդից երես չի դարձնի
Ու չի լքի Իր ժառանգությունը:
15Այլ դատաստանն արդար է դառնալու,
Ու բոլոր սրտով շիտակները հետևելու են դրան:
16Ո՞վ է ինձ համար չարագործների դեմ ելնելու,
Ո՞վ է ինձ համար կանգնելու անօրենություն գործողների դեմ:

94:12-16 Ինչպես Սաղմ.94:3-7 և 8-9 նկարագրում են ամբարիշտների խոսքերը և գործերը, այս պարբերությունը կապ ունի հավատարիմ հետևորդների հետ:

1. նրանք երանելի են (առանձնահատուկ է Իմաստասիրական Գրականությանը, տես՝ Սաղմոս 1:1-ի գրառումը) անգամ ՅԱՀՎԵԻ խրատի միջոցով (տես՝ Եբր.12:5-13), Սաղմ.94:12:
2. նրանք երանելի են ՅԱՀՎԵԻ օրենքներով սովորելու միջոցով (այսինքն՝ Հատուկ Հայտնություն, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ</u> և <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)</u>), Սաղմ.94:12
3. նրանց շնորհված է հանգստություն (այսինքն՝ ներքին խաղաղություն, BDB 1052) հակառակության օրերից, մինչև որ ամբարիշտներն իրենց իսկ հնարքներում կբռնվեն, Սաղմ .94:13
4. ՅԱՀՎԵՆ նրանց չի լքում (տես՝ Սաղմ.37:28, 1 Թագ.12:22, Ողբ 3:31), Սաղմ.94:14
5. նրանք կընդունեն արդարությունը և կքայլեն դրանում, Սաղմ.94:15:

❖ **«սիրտ»** Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏ</u>

94:16 Այս համարը ցույց է տալիս այս Սաղմոսի անհատական բնույթը, սակայն նաև հանդիսանում է սաղմոսերգուի ընկերների կողմից աղերս նրան օգնության և աջակցության համար (հավանաբար դատարանում): Այն կարող է հեշտությամբ վերաբերել նաև թագավորին: Սակայն իմ խնդիրն այս արքայական հավանականության հարցում այն է, որ եթե նա թագավոր էր, ապա ինչո՞ւ պարզապես չէր փոխարինում իր ամբարիշտ պաշտոնյաներին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 94:17-23

17Եթե ՏԵՐՆ ինձ օգնական չլիներ, քիչ կմնար,
Որ իմ անձը լռության մեջ բնակվեր:
18Երբ ասում էի. «Իմ ոտքը սայթաքում է»,
Քո ողորմությունը, ո՛վ ՏԵՐ, հաստատում էր ինձ:
19Իմ ներսում մտահոգություններիս շատանալու պահին
Քո մխիթարություններն ուրախացնում էին իմ անձը:
20Մի՞թե Քեզ հետ առնչություն ունի անօրենության աթոռը,

Որ օրենքի միջոցով չարություն է ծրագրում:
[21]Արդարի անձի դեմ են հավաքվում
Ու դատապարտում են անմեղ արյունը:
[22]Բայց ՏԵՐՆ իմ պաշտպանությունն է,
Ու իմ Աստվածը՝ իմ ապավինության վեմը:
[23]Նրանց անօրենությունն իրենց վրա է շրջվելու
Ու նրանց իրենց իսկ չարությամբ ջնջելու է:
Մեր ՏԵՐ Աստվածը ջնջելու է նրանց:

94:17-23 Այս պարբերությունը հայտարարությունների և դրանց արդյունքների մի շարք է՝

1. ՅԱՀՎԵՆ է եղել իմ օգնությունը, ուստի ես չեմ մեռնի, Սաղմ.94:17
2. երբ մտածում էի, որ ես ձախողել եմ, ՅԱՀՎԵԻ սիրո հաստատ ուխտը ինձ պահպանեց, Սաղմ.94:18
3. երբ մտահոգվում եմ, ՅԱՀՎԵՆ մխիթարում է իմ հոգին, Սաղմ.94:19
4. ՅԱՀՎԵՆ եղել է նրա պաշտպանությունը և ապավինության վեմը, Սաղմ.94:22 (տես՝ 2 Օրինաց 32:15, Սաղմ.18:1-2, 62:6-7, տես Սաղմ.5:11-ի գրառումները)
5. ՅԱՀՎԵՆ ամբարիշտների վրա է շրջելու (նույն ԲԱՅԸ Սաղմ.94:2-ում) նրանց անօրենությունը, Սաղմ.94:20-21,23 (#4 և 5 իրար համազոր են):

94:17 «անձը» Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *NEPHESH*</u>

❖

NASB	**«լռության *մեջ բնակվեր*»**
NKJV, JPSOA	**«լռության մեջ»**
NRSV, TEV	**«լռության երկրում»**
NJB	**«լռության մեջ»**
LXX	**«Դժոխքում»**
REB	**«լուռ գերեզմանում»**
Peshitta	**«նեղության մեջ»**

Սա մահվան նկարագրություն է (տես՝ Սաղմ.115:17, այսինքն՝ *Շեոլ*, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *ՇԵՈԼ*</u>): Մահը դիտարկվում էր որպես գիտակից, բայց լուռ վայր (տես՝ Սաղմ.6:5):

94:18 «Իմ ոտքը սայթաքում է» Աստվածաշնչում մարդու կյանքը բնութագրվում է որպես արահետ, ճանապարհ, ուղի: Դրական իմաստով այդ ճանապարհը հարթ է, բարձրադիր, ուղիղ՝ առանց խոչընդոտի: Բացասական իմաստով այդ արահետը խավար է, ծուռումուռ, սայթաքուն, և շատ խոչընդոտներով:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ</u>

❖ **«ողորմությունը»** Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ</u>

94:20

NASB	**«կործանման գահ»**
NKJV	**«անօրենության գահ»**
NRSV	**«ամբարիշտ իշխաններ»**
TEV	**«ապականված դատավորներ»**
NJB	**«կործանարար դատարան»**
JPSOA	**«անարդարության աթոռ»**
LXX	**«ապօրինության գահ»**
REB	**«կաշառված արդարություն»**

MT տալիս է BDB 490 ԿԱՉՄՈՒԹՅԱՄԲ BDB 217: BDB 490 նշանակում է՝

1. աթոռ
2. իշխանության վայր
3. պատվի վայր՝
   ա. թագավորի համար
   բ. Քահանայապետի համար
   գ. կառավարչի համար

BDB 217, KB 241 նշանակում է «իշխանություն», «վեհափառություն» կամ «մեծություն»: Այս Սաղմոսը դատարանի տեսարան է. ՅԱՀՎԵՆ երկրագնդի դատավորն է (Սաղմ.94:1-2): Նաև Սաղմոս 94:16 է արտացոլում դատական տեսարան: Համար 20-ը վերաբերում է ամբարիշտ առաջնորդներին (այսինքն՝ դատավորներին): ՅԱՀՎԵՆ չի կարող համագործակցել ամբարիշտ առաջնորդների հետ (տես՝ Սաղմ.94:10-21): Գահը, տաճարը, և դատարանները պետք է արտացոլեն ՅԱՀՎԵԻ բնավորությունը: Երբ վերջիններս այդպես չեն անում, որը շատ հաճախ այդպես է, միայն ՅԱՀՎԵՆ Ինքն է ապահովության վայրը:

Սաղմոս 94:20 հաստատություն է, որ ՅԱՀՎԵՆ չի մասնակցի ապականված իրավական գործընթացներին: Աստված լույս է և Նրա մեջ բոլորովին խավար չկա (տես՝ Հակոբոս 1:17, 1 Հովհ. 1:5 և ոչ մի փոփոխության նշույլ, տես՝ Մաղ.3:6):

❖ **«որ օրենքի միջոցով չարություն է ծրագրում»** Այստեղ ԴԵՐԲԱՅԸ BDB 427, KB 428, *Qal* է: Այն կիրառվում է Սաղմ.94:9-ում ՅԱՀՎԵԻ ստեղծագործության համար, երբ ձևավորում էր մարդու աչքը: Ինչպիսի՜ հակադրություն: Մարդիկ չարիք են ստեղծում, ՅԱՀՎԵՆ՝ մարդիկ:

94:21 Ամբարիշտ թագավորները, քահանաները և դատավորները միաբանվում են, որպեսզի շահագործեն ու կործանեն հավատարիմ հետևորդին:

❖ **«կյանք»** Սա բառացի *nephesh* է (BDB 659), հ.17-ում թարգմանված որպես «անձ»:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *NEPHESH*</u>

94:22 ՅԱՀՎԵՆ տեսնում և լսում է ամբարիշտ առաջնորդների ծրագրերը: Նա Ինքը դառնում է՝

1. պաշտպանություն
2. ապաստարան

Իր հավատարիմների համար:

94:23 NASB տարբերակը տալիս է «լռություն» թե՛ Սաղմ.94:17-ում, և թե՛ 23-ում, սակայն դրանք տարբեր բառեր են MT-ում: Սաղմ.94:23-ում (երկու անգամ) տրված է «ՅԱՀՎԵՆ կբնաջնջի» (BDB 856, KB 1035, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ): Այն հանդիպում է երկու անգամ՝ շեշտադրության համար:

Ինչպես որ ամբարիշտ առաջնորդները փորձում են շահագործել և սպանել արդարին, ՅԱՀՎԵՆ էլ նրանց համար ծրագրեր ունի:

1. իրենց վրա շրջել իրենց չար գործերը
2. բնաջնջել նրանց (բառացի՝ «ոչնչացնել»՝ կիրառված է երկու անգամ, տես՝ Սաղմ.69:4, 73:27, 143:12):

Միայն մի քերականական գրառում: Ուշադրություն դարձրե՛ք, որ Սաղմ.94:22-ում բոլոր երեք ԲԱՅԵՐԸ ԱՆԿԱՏԱՐՆԵՐ են, սակայն թարգմանվում են անգլերենի /հայերենի/ որպես անցյալ և երկու ԱՊԱՌՆԻ ԲԱՅԵՐ (NRSV, TEV բոլոր երեքն էլ ԱՊԱՌՆԻ):
Միայն համատեքստը կարող է որոշել եբրայերեն ԲԱՅԵՐԻ ժամանակային տարրը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞րն է Սաղմ. 94:1-2 և 94:3-ի միջև աստվածաբանական խնդիրը:
2. Ովքե՞ր են Սաղմ. 94:3-ի «ամբարիշտները»:
3. Ինչպե՞ս է Սաղմ. 94:6 նման 2 Օրինացին:
4. Արդյո՞ք Սաղմոս 94:10 վերաբերում է բոլոր մարդկանց, թե՞ միայն Իսրայելին:
5. Արդյո՞ք Սաղմ. 94:16 դատարանի տեսարան է:
6. Քանի՞ պարբերություն կա Սաղմ. 94:16-23-ում: Ինչո՞վ է սա կարևոր: